# ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

## Հանձնվում է մի անձի, ով կալանված է ի կատարումն եվրոպական ձերբակալման հրամանի, նախնական կալանքի պահանջի, կամ օտար երկրի հանձնման ենթակայ լինելու

Դուք բանտարկվել եք ի կատարումն եվրոպական ձերբակալման հրամանի, նախնական կալանքի պահանջի կամ օտար երկրի հանձնման ենթակա լինելու: Այս փաստաթուղթը հիշեցնում է այն հիմնական իրավունքները, որոնցից դուք կարող եք օգտվել:

**Ստորև տեղեկատվությունը պետք է տրվի ձեզ մի լեզվով, որը դուք հասկանում եք:**

***<u>Դուք կարող եք պահպանել այս փաստաթուղթը բանտարկության տակ գտնվելու ամբողջ ընթացքում</u>***

Դուք տեղեկացվում եք, որ դուք բանտարկվել եք, քանի որ դուք փնտրվում եք մի օտարերկրյա պետության խնդրանքով ի կատարումն եվրոպական ձերբակալման հրամանի կամ օտար երկրի հանձնման ենթակա լինելու արդյունքում կամ նախնական կալանքի օտար երկրի հանձնման նպատակով կամ մի դատավճռի պատիժը կրելու համար:

### Օրենքի խախտման իմացությունը

Դուք իրավունք ունեք իմանալ ենթադրյալ հանցագործության կատարման անունը, ամսաթիվը եւ տեղը, որի համար ձեր դեմ հանձվել է եվրոպական ձերբակալման հրաման, նախնական կալանքի պահանջ կամ օտար երկրի հանձնման ենթակայություն:

### Իրավաբանի օգնության մասին

**<u>Իրավաբանի ընտրությունը</u>**

Բանտարկության հենց սկզբում, կարող եք խնդրել ձեր սեփական ընտրությամբ կամ ի պաշտոնե (ավտոմատ) նշանակված մի փաստաբանի, որ ձեզ օգնի: Եթե դուք ի վիճակի չէք ընտրել իրավաբանի կամ էլ եթե իրավաբանի հետ անհնար է կապվել, դուք կարող եք խնդրել, որ որեվե իրավաբան ձերգործով զբաղվի ավտոմատկերպով:

Ձեր փաստաբանը կարող է նշանակվել նաեվ մի մարդու կողմից, որին դուք տեղեկացրել եք. այս դեպքում, դուք պետք է հաստատեք այդ ընտրությունը:

**<u>Իրավաբանի օգնության ու գործողության վերջնաժամկետի մասին</u>**

Իրավաբանը կարող է զրուցել ձեզ հետ 30 րոպե, այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են հարցազրույցի գաղտնիությունը:

Ձեր առաջին լսումը, եթե դա վերաբերում է միայն ինքնության տարրերին, չի կարող սկսել առանց ձեր

փաստաբանի ներկայության, մինչև երկու ժամ վերջնաժամկետի լրանալը, որը սկսվում է նրան ուղղված ձեր խնդրանքի ծանուցումից հետո:

Եթե ձեր իրավաբանը նեկայանա, երբ մի լսում կամ հարցաքննություն ընթացքի մեջ է, այդ գործողությունը կարող է դադարեցվել ձեր խնդրանքով, որպեսզի դուք նրա հետ կարողանաք խոսել:

**Լռություն պահելու իրավունքը**

Ձեր քանտարկության ընթացքում, դուք կարող եք կամ հայտարարություններ անել, կամ պատասխանել ձեզ տրվող հարցերին, կամ լռել:

**Թարգմանչի աջակցությունը**

Եթե դուք չեք խոսում կամ հասկանում ֆրանսերենը, դուք իրավունք ունեք օգտվել թարգմանչի անվճար օգնությունից՝ ձեր լսումների եւ ձեր փաստաբանի հետ շփվելու նպատակով.

**Ազատազրկման տնղության եւ դատավարության շարունակության մասին**

Ձեր կալանքը կարող է տնել քառասունունութ ժամ, առանց միջանկյալ երկարաձգման:

Այդ ժամանակահատվածի վերջում, դուք կբերվեք <u>գլխավոր դատախազի</u> առաջ, տարածքային առումով իրավասու կամ ում խնդրվել է ձեզ կալանել, ով ձեր ինքնությունը ճշտելուց հետո, ձեզ կտեղեկացնի մի լեզվով, որը դուք հասկանում եք, որ գոյություն ունի եվրոպական ձերբակալման հրաման կամ նախնական կալանքի պահանջ կամ ձեզ օտար երկրի հանձնման, որին դուք ենթակա եք, ու հնարավորության մասին ձեր ընտրությամբ մի փաստաբանի կողմից աջակցվելու, կամ եթե չկա այդպիսին, իրավաբանների ընկերակցության նախագահի կողմից ավտոմատ ձեր գործին կցված, ով այնուհետև կտեղեկացվի ցանկացած միջոցներով:

Դուք կարող եք այդ դեպքում անմիջապես խոսել նշանակված իրավաբանի հետ, ով կարող է նույն պահից էլ ուսումնասիրել ձեր անձնական գործը և ազատ շփվել ձեզ հետ:

Այդ եվրոպական ձերբակալման հրամանի նախնական կալանքի պահանջի կամ ձեզ օտար երկրի հանձնման ծանուցումից հետո, եթե գլխավոր դատախազը որոշի ձեզ ազատության մեջ չթողնել, ապա դուք կներկայացվեք վերաքննիչ դատարանի առաջին նախագահին կամ նրա կողմից նշանակված դատավորին, ով էլ կարող է՝

- կամ հրամայել ձեզ բանտարկել մինչև օտար երկրի հանձնման մասին պաշտոնական փաստաթղթերի ստանալը (որոնք կախված համաձայնագրերից տարբեր վերջնաժամկետներ ունեն), կամ էլ ձեզ ներկայացնել քննչական դատարանի առաջ, որը կորոշի եվրոպական ձերբակալման հրաման կամ օտար երկրի հանձնման մասին:

- կամ, եթե նա գտնի, որ ձեր ներկայությունը վարույթի բոլոր կետերին բավականաչափ ապահովված է, դուք

կդրվեք դատական վերահսկողության ներքո, կամ կպարտադրվեք բնակվել մի կոնկրետ վայրում (այդ տեղը չլքելու պահանջով) ու էլեկտրոնային վերահսկողությամբ, կամ ձեզ ազատ կարձակեն առանց դատական քննության՝ մինչև պաշտոնական փաստաթղթերի ստանալը օտարերկրի հանձնման մասին, կամ ձեզ կներկայացնենքննչական դատարանի առաջ, որը կորոշի ձեզ հանձնել թե ոչ ձեզ պահանջող պետությանը։

## Օտարերկրի հանձնման հնարավորություն համաձայնվելու մասին

Դուք իրավունք ունեք համաձայնվել կամ ոչ ձեր հանձնմանը այն պետությանը, որը փնտրում է ձեզ։ Ձեր համաձայնության դեպքում, լուսաբանման դատարանը պետք է ավելի կարճ ժամանակահատվածում որոշում կայացնի։ Եթե դուք համաձայն եք ձեզ հանձնմանը եվրոպական ձերբակալման հրամանի առումով, ձեր որոշումը այլևս չի կարող հետագայում փոփոխվել։

## Որոշ անձանց տեղեկացնելը

Դուք իրավունք ունեք տեղեկացնել այն մարդկանց որոնց ցանկանում եք, հատկապես ձեր ընտանիքի անդամներին, այն մասին, որ կալանքի տակ եք գտնվում։
Եթե դուք օտարերկրի քաղաքացի եք, դուք կարող եք բացի այդ տեղեկացնել մեկի միջոցով ձեր երկրի հյուպատոսական իշխանություններին։

## Բժշկական քննության մասին

Դուք կարող եք խնդրել զննվել բժշկի կողմից՝ բանտարկության ընթացքում։